ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2020թ. թիվ 897-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 766-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 766-Ա որոշման վերնագրում «հրամանն անվավեր ճանաչելու մասին» բառերը փոխարինել «հրամանի հետևանքները վերացնելու մասին» բառերով:

2. ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 766-Ա որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 11.09.2020թ. թիվ 93 հրամանի առաջին կետով չի պահպանվել Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

«ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Դավթյանին՝

Վերացնել 11.09.2020թ. թիվ 93 հրամանի հետևանքները՝ աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը և ներկայացնել տեղեկատվություն:»:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին՝

Սույն որոշումը եռօրյա ժամկետում առձեռն հանձնելու միջոցով ծանուցել «ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

10/29/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 29
ք.Վանաձոր